



«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՄՊԸ
ԽՈՐՀՐԴԻ 25.09.2007 թ. թիվ 011 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԻ 13.04.2016թ. թիվ 17 ՈՐՈՇՄԱՄԲ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ.....	2
2. Ապահովագրության սուբյեկտները	3
3. Ապահովագրության օբյեկտը.....	3
4. Ապահովագրական ռիսկեր, ապահովագրական պատահար	3
5. Ապահովագրական գումար, ապահովագրական գումարի ենթաչափեր,.....	4
չհատուցվող գումար	4
6. Ապահովագրավճար, ապահովագրավճարի վճարման կարգը, ապահովագրավճար չվճարելու հետևանքները	4
7. Ապահովագրության պայմանագրի կնքման կարգը, գործողության ժամկետը	4
և դրա վաղաժամկետ լուծման կարգը	4
8. Ռիսկի աստիճանի փոփոխման հետևանքները	6
9. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները	6
10. Ապահովագրական հատուցման վճարման և վնասի գնահատման կարգը	7
11. Չհատուցվող պատահարները	9
12. Ապահովագրության պայմանագրի փոփոխությունները և լրացումները	9
13. Վեճերի լուծման կարգը	9
14. Եզրափակիչ դրույթներ	9

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Գնահատողների մասնագիտական պատասխանատվության կամավոր ապահովագրության» սույն կանոնները (այսուհետև՝ Կանոններ) մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2. Գնահատողների մասնագիտական պատասխանատվության կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասի մեջ:

1.3. Կանոնների համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ապահովագրող) ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ (այսուհետև՝ Ապահովադիրներ) կնքում է գնահատողների (այսուհետև՝ ապահովագրված անձինք) մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր:

1.4. Ապահովագրության պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) կնքման և գործողության ընթացքում Ապահովագրողը և Ապահովադիրը կարող են գրավոր կերպով փոփոխություններ, լրացումներ կամ բացառություններ կատարել Կանոնների առանձին դրույթներում:

1.5. Կանոնների և Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են գրավոր ձևով և հաստատվում Ապահովագրողի և Ապահովադիրի կողմից (այսուհետև նաև Պայմանագրի կողմեր):

Կանոններում օգտագործվող հասկացությունները՝

1.6. **Ապահովագրող՝** «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, որը որոշակի վճարի (ապահովագրավճար) դիմաց իր վրա է վերցնում ապահովադիրի պատասխանատվության ռիսկը (նյութական հետևանքները) և ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովադիրին հատուցում է վնասը՝ սահմանված կարգով ապահովագրական հատուցում վճարելու միջոցով:

1.7. **Ապահովադիրը՝** ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած իրավաբանական անձ կամ գործունակ ֆիզիկական անձ:

1.8. **Ապահովագրության պայմանագիր՝** ապահովագրողի և ապահովադիրի միջև առաջացող հարաբերությունները կարգավորող և նրանց միջև կնքվող գրավոր համաձայնություն, ըստ որի սահմանված ժամկետում ապահովադիրի կողմից վճարվող ապահովագրավճարների դիմաց ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման դեպքում կատարել ապահովագրական հատուցում հօգուտ այն կողմի (Շահառուի), որի առջև դատարանի կողմից կայացված և ուժի մեջ մտած վճռի հիման վրա ապահովագրված անձը կրում է համապատասխան պատասխանատվություն: Կանոններում Պայմանագիրը նույնացվում է ապահովագրության վկայագրի հետ:

1.9. **Ապահովագրված անձ՝** իրավական ակտերով սահմանված կարգով գնահատման գործունեություն իրականացնող անձ, որի մասնագիտական պատասխանատվությունը ապահովագրված է Կանոնների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրում և որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա:

Կանոնների համաձայն այդպիսի անձ կարող է հանդիսանալ Կանոնների 1.22. կետում սահմանված գնահատվող օբյեկտների գնահատում իրականացնող անձը:

1.10. **Շահառու՝** Պայմանագրով նախատեսված՝ ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ, որին կարող է վնաս պատճառվել և որի առջև ապահովագրված անձը պետք է համապատասխան պատասխանատվություն կրի, եթե անգամ Պայմանագիրը կնքվել է հօգուտ այլ անձի կամ Պայմանագրում նշված չէ, թե ում օգտին է այն կնքվել:

Կանոնների համաձայն շահառու կարող են հանդես գալ հետևյալ անձինք՝

- գնահատողի ծառայությունից օգտվողները,
- գնահատվող օբյեկտի սեփականատերը,
- անձինք, որոնք սեփականատիրոջ համաձայնությամբ ցանկություն ունեն անշարժ գույքի հետ կապված կնքել պայմանագիր,
- տեղական ինքնակառավարման և պետական մարմինները,
- այլ անձինք (երրորդ կողմ), որոնց կարող է պատճառվել վնաս գնահատողի մասնագիտական գործունեության ընթացքում:

1.11. **Ապահովագրական գումար (ապահովագրական ծածկույթ)՝** ապահովադիրի և ապահովագրողի համաձայնությամբ որոշված՝ դրամական արտահայտությամբ գումար, որի շրջանակներում Ապահովագրողը կրում է պատասխանատվություն:

1.12. **Ապահովագրական գումարի ենթաչափեր՝** Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի շրջանակներում մեկ ապահովագրական պատահարի համար սահմանվող ենթաչափեր (հատուցման ենթակա առավելագույն չափեր):

1.13. **Ապահովագրավճար՝** ապահովագրության համար նախատեսվող գումար, որն ապահովադիրը Պայմանագրի համաձայն պարտավոր է մուծել ապահովագրողին:

1.14. **Ապահովագրական սակագին՝** Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ, որը որոշվում է ապահովագրողի կողմից:

1.15. **Ապահովագրական դեպք կամ ապահովագրական պատահար՝** Պայմանագրի գործողության ընթացքում գնահատողի (Ապահովագրված անձի) կողմից իր հաճախորդների նկատմամբ ստանձնած պարտավորության՝ այն է պատշաճ կերպով գրավոր ձևակերպված պայմանագրով ստանձնած որևէ շարժական կամ անշարժ գույք գնահատելու գործողության իրականացում, որն առաջացրել է Ապահովագրված անձի հաճախորդների (շահառուների) Կանոններով նախատեսված վնասներ և որն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով հիմք է հանդիսանում հաճախորդի կողմից Ապահովագրված անձի նկատմամբ վնասի փոխհատուցման պահանջի համար: Ապահովագրական պատահարը որպես այդպիսին ճանաչվում է դատարանի կողմից հաստատված և օրինական ուժի մեջ մտած վճռով (որոշմամբ), որի

առկայությամբ ծագում է Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտականությունը:

1.16. **Չհատուցվող գումար**՝ ապահովագրի մասնակցության չափը վնասի հատուցմանը, որը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

1.17. **Պայմանական չհատուցվող գումար**՝ Պայմանագրով սահմանված գումար, որի դեպքում Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով:

1.18. **Ոչ պայմանական չհատուցվող գումար**՝ Պայմանագրով սահմանված գումար, որի ժամանակ ապահովագրական հատուցումը պակասեցվում է չհատուցվող գումարի չափով:

1.19. :

1.20. **Ապահովագրական հատուցում**՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա ապահովագրի կամ շահառուին վճարման ենթակա գումարն է:

1.21. **Գնահատող**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ (անհատ ձեռներեց), որն օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն զբաղվում է գնահատման գործունեությամբ:

1.22. **Գնահատման գործունեություն**՝ գնահատողի կողմից իրականացվող գործունեություն, որը կապված է գնահատվող օբյեկտի շուկայական և այլ արժեքի որոշման հետ:

1.23. **Գնահատվող օբյեկտներ**՝

- ա) առանձին նյութական օբյեկտներ (իրեր),
- բ) անձին պատկանող գույք, այդ թվում գույքի որոշակի տեսակներ (անշարժ և շարժական, այդ թվում կազմակերպություն),
- գ) սեփականության և այլ գույքային իրավունք՝ գույքի և դրա կազմից դուրս առանձին մասի նկատմամբ,
- դ) պահանջի իրավունք և պարտականություններ (պարտքեր),
- ե) աշխատանք, ծառայություններ կամ տեղեկատվություն,
- զ) քաղաքացիական իրավունքի այլ օբյեկտներ:

Գնահատվող օբյեկտի արժեքը կախված է՝

- ա) օբյեկտի շուկայական արժեքից,
- բ) օբյեկտի հաշվեկշռային արժեքից,
- գ) օբյեկտի տնտեսական արժեքից,
- դ) աշխատող կազմակերպության արժեքից,
- ե) կազմակերպության վարկանիշային արժեքից (անվանումից),
- զ) օբյեկտի մաշվածության արժեքից,
- է) օբյեկտի ապահովագրական արժեքից,
- ը) օբյեկտի ընթացիկ արժեքից,
- թ) օբյեկտի վերականգնման արժեքից:

2. Ապահովագրության սուբյեկտները

2.1. Կանոնների համաձայն Ապահովագրողը պետք է ունենա գնահատման գործունեություն իրականացնելու համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան մարմինների կողմից տրված լիցենզիա (արտոնագիր):

2.2. Պայմանագիրը կնքվում է այն գնահատողի հետ, որին տրված լիցենզիայի գործողության ժամկետը լրացած չէ և չի լրանում մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

2.3. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրում ապահովագրվում է Ապահովագրված անձի պատասխանատվության ռիսկը: Եթե Պայմանագրում ապահովագրված անձ նշված չէ, ապա ապահովագրված է համարվում Ապահովագրողի պատասխանատվության ռիսկը (այս դեպքում Ապահովագրված անձ է համարվում Ապահովագրողը): Պայմանագրում ռիսկն ապահովագրված է համարվում հոգուտ այն կողմի՝ Շահառուի, որի առջև Պայմանագրի պայմաններով Ապահովագրված անձը պետք է համապատասխան պատասխանատվություն կրի, եթե անգամ Պայմանագիրը կնքվել է հոգուտ այլ անձի կամ նրանում նշված չէ, թե ում օգտին է այն կնքվել:

3. Ապահովագրության օբյեկտը

3.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում օրենքին և այլ իրավական ակտերին չհակասող Ապահովագրողի գույքային շահերը՝ կապված գնահատման գործունեություն իրականացնելու հետևանքով Շահառուի գույքային շահերին հասցված վնասի հետ:

3.2. Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունը առաջանում է, եթե Շահառուի գույքային շահերին հասցված վնասը ուղիղ պատճառահետևանքային կապ ունի գնահատողի գործունեության հետ և գույքի գնահատման արդյունքում Շահառուի գույքային շահերին հասցվել է վնաս Պայմանագրի գործողության ժամանակահատվածում:

3.3. Ընդ որում Կանոնների 3.2 կետում նշված պայմաններում հատուցվում է Շահառուին պատճառված այն վնասը, որը ծագել է գնահատողի կողմից ոչ ճիշտ, ոչ օբյեկտիվ կամ ոչ լրիվ (թերի) եզրակացության տրամադրման արդյունքում, որը գնահատողի կանխամտածված և դիտավորյալ գործունեության արդյունք չէ և այդ վնասը հատուցելու պարտավորության հանգամանքը հաստատվել է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով (որոշմամբ):

4. Ապահովագրական ռիսկեր, ապահովագրական պատահար

4.1 Ապահովագրական ռիսկ է համարվում Ապահովագրված անձի գնահատման գործունեություն իրականացնելու հետ կապված Շահառուի գույքային շահերին հասցված հավանական վնասը, որի ի հայտ գալու հետ կապված իրականացվում է Կանոններով նախատեսված ապահովագրությունը:

4.2 Կանոններով ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Ապահովագրված անձի կողմից գնահատման գործունեություն իրականացնելու հետևանքով Շահառուին հասցված վնասի համար պատասխանատվություն առաջացնող փաստը, որը հաստատված է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով (որոշմամբ) և որի վրա հասնելու հետևանքով սկիզբ է առնում ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:

5. Ապահովագրական գումար, ապահովագրական գումարի ենթաչափեր, չհատուցվող գումար

5.1 Ապահովագրական գումարը որոշվում է Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

5.2 պայմանագրով կարող են նշվել մեկ ապահովագրական պատահարով հատուցման ենթակա առավելագույն չափեր՝ ապահովագրական գումարի ենթաչափեր: Ընդ որում, եթե այդպիսի դեպքերում մեկ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացել են մեկից ավելի վնասներ, ապա դրանք միավորվում և դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահարի հետևանք: Եթե Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի ենթաչափը չի բավարարում մեկ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած մի քանի վնասների հատուցման համար, ապա Ապահովագրողը ապահովագրական հատուցումը յուրաքանչյուր վնասի գծով իրականացնում է վնասի մի մասի չափով՝ ընդհանուր վնասների մեջ տվյալ վնասի համամասնությամբ՝ մասհանելով նաև Պայմանագրում սահմանված չհատուցվող գումարի չափը: Պայմանագրի կնքման ժամանակ ապահովագրական գումարի ենթաչափերը որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և կարող են սահմանվել ինչպես գնահատման ենթակա առանձին օբյեկտների գծով, այնպես էլ մեկ ապահովագրական պատահարի համար:

5.3. Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը Ապահովագրողի կողմից իրականացված ապահովագրական հատուցմամբ պայմանավորված նվազման դեպքում կարող է Ապահովագրողի ցանկությամբ վերականգնվել կամ լրացվել՝ լրացուցիչ ապահովագրավճարի մուծմամբ: Լրացուցիչ ապահովագրավճարի մեծությունը սահմանվում է Ապահովագրողի կողմից:

5.4. Պայմանագրում կողմերը կարող են որոշել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումարի չափեր:

6. Ապահովագրավճար, ապահովագրավճարի վճարման կարգը, ապահովագրավճար չվճարելու հետևանքները

6.1. Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերի Ապահովագրողի կողմից ընտրված ծածկույթից, կարգավորիչ գործակիցներից, չհատուցվող գումարի մեծությունից և ապահովագրության ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

6.2. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ, սահմանվում են Կանոններով և Պայմանագրով:

6.3. Ապահովագրավճարներն Ապահովագրողի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ ապահովագրության ժամկետի համար կամ մաս-մաս: Վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:

6.4. Ապահովագրական գումարի լրացման դեպքում Ապահովագրողը պարտավոր է լրացուցիչ ապահովագրավճարը վճարել միանվագ կարգով: Լրացուցիչ ապահովագրավճարի մեծությունը սահմանվում է Ապահովագրողի կողմից:

6.5. Ապահովագրավճարներն Ապահովագրողի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ ներկայացուցչին, իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

6.7. Ապահովագրավճարի վճարման օր է համարվում՝

ա) կանխիկ դրամով վճարման դեպքում Ապահովագրողի դրամարկղ դրամական միջոցների մուտքագրման կամ ներկայացուցչին հանձնման օրը,

բ) անկանխիկ վճարումների դեպքում Ապահովագրողի հաշվարկային հաշվին դրամական միջոցների ստացման օրը:

6.8. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:

6.9. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովագրողը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

6.10. Եթե ապահովագրողը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին ապահովագրողին ծանուցելու:

7. Ապահովագրության պայմանագրի կնքման կարգը, գործողության ժամկետը և դրա վաղաժամկետ լուծման կարգը

7.1. Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով:

7.2. Պայմանագիրը կարող է կնքվել միայն գնահատման գործունեություն իրականացնելու լիցենզիայի գործողության ժամանակահատվածի համար:

7.3. Պայմանագիր կնքելու համար Ապահովագրողն Ապահովագրողին պետք է ներկայացնի՝

ա) գրավոր դիմում, որտեղ պետք է ներառված լինի տեղեկատվություն՝

- ապահովագրական ռիսկերի վերաբերյալ,
- ապահովագրական գումարի չափի և ապահովագրական գումարի ենթաչափերի վերաբերյալ,
- ապահովագրության ժամկետի վերաբերյալ,
- կնքվող գնահատման պայմանագրերի քանակի, դրանց գումարային արժեքի և գնահատման օբյեկտի

(ապահովագրության ժամկետի ընթացքում) վերաբերյալ, եթե այդպիսիք նախապես հայտնի են Ապահովագրողին (Ապահովագրված անձին),

- Ապահովադրի (Ապահովագրված անձի) դեմ ներկայացված դատական հայցերը և դրանց վերջնական լուծումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները,
 - գույքային հայցապահանջների վերաբերյալ, որում անհրաժեշտ է նշել ընդհանուր վնասների ծավալը՝ կապված վերջին 3 տարիների ընթացքում գնահատման գործունեության հետևանքով վնասի հատուցման համար կատարված վճարումների կամ վճարման ենթակա գումարների հետ,
 - բ) իրավաբանական անձի (անհատ ձեռներեցի) պետական ռեզիստրի վկայագրի պատճենը,
 - գ) լիցենզիայի կամ գնահատումն իրականացնելու իրավունքի այլ փաստաթղթի պատճենը,
 - դ) գնահատման պայմանագրի պատճենը (այն Պայմանագրի համար, որում ապահովագրության օբյեկտ է համարվում առանձին գնահատման պայմանագրով նախատեսված ռիսկը) կամ Ապահովադրի (Ապահովագրված անձի) տիպային գնահատման պայմանագիրը (այն Պայմանագրերի համար, որտեղ ապահովագրության օբյեկտ է համարվում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում կնքված մի շարք գնահատման պայմանագրեր),
 - ե) Ապահովադրի (Ապահովագրված անձի) աշխատակիցների ցուցակը (համապատասխան կրթությունով ոչ պակաս, քան մեկ մասնագիտացված գնահատող, որի համար Ապահովադրի (Ապահովագրված անձի) կազմակերպությունը հանդիսանում է մշտական աշխատատեղ, որտեղ նշված է՝
 - անուն, ազգանուն, հայրանունը,
 - լիցենզիայի համարը և տրման ամսաթիվը, գործողության ժամկետը, որը հավաստում է գնահատման գործունեությամբ զբաղվելու իրավունքը,
 - պաշտոնը,
 - գնահատման գործունեությամբ զբաղվելու ստաժը:
- 7.4. Դիմումի մեջ նշված տվյալների իսկության պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Դիմումի մեջ Ապահովադրի կողմից ոչ ճիշտ տվյալների շարադրման դեպքում, Ապահովագրողը, ապահովագրական դեպքի վրա հասնելու պարագայում, ազատվում է ապահովագրական հատուցումը վճարելու պարտավորության կատարումից:
- 7.5. Եթե Կանոնների 7.3 կետում նշված տեղեկատվությունը ներառվում է Պայմանագրում, ապա Ապահովագրողն ապահովագրությունը կարող է իրականացնել Ապահովադրի (Ապահովագրված անձի) բանավոր դիմումի հիման վրա:
- 7.6. Ապահովագրողը, ելնելով որոշակի հանգամանքներից, կարող է նաև կրճատել կամ մեծացնել իրեն ներկայացվող տեղեկությունների ցանկը և համապատասխանաբար Ապահովադրին տրամադրել Պայմանագրի՝ Կանոնների 7.3 կետում նշված տեղեկատվությունից պակաս կամ ավել տեղեկատվության ներկայացմամբ:
- 7.7. Ապահովագրողն իրավունք ունի մերժել Պայմանագրի կնքումը, եթե՝
- ա) Պայմանագրի կնքման պահին գնահատողը չունի գնահատում իրականացնելու համար համապատասխան իրավասու մարմինների կողմից տրված լիցենզիա,
 - բ) գնահատողի լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է մինչև այն պահը, երբ Ապահովադիրը Պայմանագիր հավակնում է ստանալ,
 - գ) գնահատողը կնքել է Ապահովագրողի գույքի գնահատման պայմանագիր,
 - դ) գնահատողը չի ներկայացրել Ապահովագրողի պահանջով անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ,
 - ե) գնահատողն իր կողմից ծառայություններ սպառողի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի կերպով հանդիսանում է հիմնադիր, մասնակից, սեփականատեր, բաժնետեր, կրեդիտոր, պաշտոնյա անձ, որևէ պայմանագրով պատվիրատու կամ ծառայություններ սպառող կամ հանդիսանում է հիմնադիր, սեփականատեր, բաժնետեր, կրեդիտոր կամ գնահատողի ապահովագրող,
 - զ) գնահատողը գույքային շահ ունի գնահատվող օբյեկտի նկատմամբ,
 - է) գնահատողն ակնկալվող Պայմանագրից բացի ունի գույքային կամ պարտավորության իրավունք գնահատվող օբյեկտի նկատմամբ,
 - ը) գնահատողը հանդիսանում է ծառայություններ սպառողի հետ փոխկապակցված անձ:
- 7.8. Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի և Ապահովագրողի կողմից համաձայնեցված ցանկացած կամ որոշակի աշխատանքների կատարման ժամկետով: Պայմանագիրը կարող է կնքվել մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:
- 7.9. Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Պայմանագրի կորցնելու դեպքում Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա տրվում է Պայմանագրի կրկնօրինակը, որից հետո կորցրած Պայմանագիրը համարվում է անվավեր:
- 7.10. Կրկնօրինակը կորցնելու դեպքում Պայմանագրի գործողության ընթացքում մյուս կրկնօրինակների տրամադրման համար Ապահովագրողն Ապահովադրից կարող է գանձել կրկնօրինակի պատրաստման և ձևակերպման համար վճար:
- 7.11. Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբն ու վերջը նշվում է Պայմանագրում: Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը տարածվում է այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբ համարվող ամսաթվի 00.00 ժամից մինչև Պայմանագրի գործողության ժամկետի վերջ համարվող ամսաթվի 24.00 ժամը:
- 7.12. Ապահովադրի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետներում հերթական ապահովագրավճարի չմուծման կամ այն ոչ լրիվությամբ մուծման դեպքում Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը չի տարածվում այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրում նշված հերթական ապահովագրավճարի վճարման օր հանդիսացող ամսաթվին հաջորդող օրվա ժամը 00.00-ից մինչև պարտքի փաստացի վճարման օր հանդիսացող ամսաթվի ժամը 24.00-ն: Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է՝
- ա) Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարման պարտականության լրիվ ծավալով կատարման (լրիվ ապահովագրական գումարի վճարման) դեպքում: Ընդ որում ոչ մի լրացուցիչ փոխադարձ հաշվարկ Կողմերի միջև այս դեպքում այլևս չի կատարվում.
 - բ) եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական դեպքի տեղի ունենալու հավանականությունը կամ ապահովագրական ռիսկի գոյությունը վերացել է՝ կապված ապահովագրական պատահարով չպայմանավորված հանգամանքներ տեղի ունենալու հետ: Ընդ որում Ապահովագրողն այս դեպքում վերադարձնում է Ապահովադրին Պայմանագրի չլրացած ժամկետի համար ապահովագրավճարի համապատասխան մասը՝ մասհանելով Պայմանագրի կնքման հետ կապված գործավարման ծախսերը, որը կազմում է 30 % ապահովագրավճարի նկատմամբ:
 - գ) Ապահովադրի մահվան (ֆիզիկական անձ) կամ Ապահովադրի լուծարման (իրավաբանական անձ) դեպքում՝ բացառությամբ օրենքով սահմանված կարգով Ապահովադրի վերակազմակերպման հետևանքով Ապահովադրի փոփոխման դեպքում, ընդ որում այս դեպքում Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարները ենթակա չեն վերադարձման,
 - դ) Դատարանի կողմից Պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին վճիռն (որոշումն) օրինական ուժի մեջ մտնելու դեպքում, ընդ որում այս դեպքում ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարները ենթակա չեն վերադարձման,

ե) գնահատման գործունեության իրականացման լիցենզիան չեղյալ համարվելու դեպքում, եթե լիցենզիան չի տրվել Ապահովադիրին սահմանված կարգով կամ այն տրվել է ոչ հավաստի և ոչ լրիվ տվյալների հիման վրա, ընդ որում այս դեպքում ապահովադիր կողմից վճարված ապահովագրավճարները ենթակա չեն վերադարձման,

զ) գնահատման գործունեության իրականացման ընթացքում իրավական ակտերը խախտելու կամ այլ հիմքով լիցենզիայից զրկելու հետևանքով կամ եթե լիցենզիայի ժամկետը դադարել է Պայմանագրի գործողության ընթացքում, ընդ որում այս դեպքում ապահովադիր կողմից վճարված ապահովագրավճարները ենթակա չեն վերադարձման,

է) Պայմանագրով, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում:

7.13. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել ինչպես Ապահովադիր, այնպես էլ Ապահովագրողի պահանջով:

7.14. Ապահովադիր պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Պայմանագրի համաձայն Ապահովադիր կողմից վճարված ապահովագրավճարի 70 %-ը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադիր պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Պայմանագրի համաձայն Ապահովադիր կողմից վճարված ապահովագրավճարի 80 %-ը:

7.15. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրին են վերադարձվում ապահովագրավճարներն ամբողջությամբ, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադիր կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Պայմանագրի համաձայն Ապահովադիր կողմից վճարված ապահովագրավճարի 70 %-ը:

7.16. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար (բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է և Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ) կամ ստացել է ապահովագրական հատուցում:

7.17. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրն՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

7.18. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտն Ապահովագրողին չի ազատում Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած ապահովագրական դեպքերի հետևանքով առաջացած վնասների փոխհատուցումներից:

8. Ռիսկի աստիճանի փոփոխման հետևանքները

8.1. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է անմիջապես հայտնել Ապահովագրողին իրեն հայտնի դարձած էական իրադարձությունների փոփոխման մասին, որոնք կարող են էականորեն ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:

8.2. Ապահովագրողը, տեղեկացվելով ռիսկի մեծացման մասին, իրավունք ունի փոփոխել Պայմանագրի պայմանները և պահանջել ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի վճարում կամ պահանջել լուծել Պայմանագիրը:

8.3. Եթե Ապահովադիրն առարկում է Պայմանագրի պայմանների փոփոխմանը կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարմանը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների համաձայն գրավոր ծանուցելով այդ մասին Ապահովադիրին, որի դեպքում Ապահովադիր կողմից վճարված ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման: Միաժամանակ Ապահովագրողն իրավունք ունի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պահանջել Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետ կապված իրեն պատճառված վնասների փոխհատուցում:

8.4. Ապահովագրողն իրավունք չունի պահանջել միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե հանգամանքները, որոնք նպաստել են ռիսկի մեծացմանը, արդեն վերացել են:

9. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

9.1 Ապահովադիրը (Ապահովագրված անձը) իրավունք ունի՝

9.1.1 Ապահովագրողից ստանալ խորհրդատվություն Կանոնների և Պայմանագրի պայմանների մասին,

9.1.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու և Ապահովագրողի կողմից որպես այդպիսին ճանաչվելու դեպքում ապահովագրական հատուցում ստանալ սահմանված ծավալով և կարգով՝ համաձայն Կանոնների և Պայմանագրի պահանջների,

9.1.3 Վաղաժամկետ լուծել Պայմանագիրը օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոններով սահմանված դեպքերում,

9.1.4 Փոփոխություններ մտցնել այն գնահատող անձանց ցուցակի մեջ, որոնք Պայմանագրերով ունեն գնահատման գործունեության իրականացման իրավունք: Փոփոխություններ կատարելու համար Ապահովադիրը պետք է գրավոր դիմում ներկայացնի Ապահովագրողին փոփոխությունների կատարման ենթադրվող ամսաթվից առնվազն մեկ օր առաջ: Փոփոխությունները կազմվում են Պայմանագրին կից համաձայնագրի կազմման կամ լրացման ձևով, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը,

9.1.5 Պայմանագիրը կորցնելու դեպքում ստանալ դրա կրկնօրինակը,

9.1.6 Պայմանագիր կնքել իր ներկայացուցչի միջոցով, որն ունի պատշաճ ձևակերպված լիազորություն,

9.1.7 Ապահովադիրից (Ապահովագրված անձից) պահանջել օրենքով, այլ իրավական ակտերով և Պայմանագրով նախատեսված այլ գործողությունների իրականացում:

9.2 Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է՝

9.2.1 Ժամանակին մուծել ապահովագրավճարը, իսկ ապահովագրավճարի տարածամկետ վճարումներ նախատեսված լինելու դեպքում՝ Պայմանագրով սահմանված չափերով և կարգով իրականացնել հերթական ապահովագրավճարի վճարումը,

9.2.2 գրավոր ծանուցել Ապահովագրողին այն բոլոր հանգամանքների մասին, որոնք կարող են հանգեցնել ռիսկի աստիճանի փոփոխության՝ այդպիսի հանգամանքների ծագման մասին իր տեղեկացվելու պահից սկսած մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

9.2.3 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում՝

ա) անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել վնասի կանխարգելման համար, այսինքն գործել այնպես, ինչպես կգործեր, եթե իր պատասխանատվությունն ապահովագրված չլիներ,

բ) ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին տեղեկացնել Պայմանագրում նշված կարգով և ժամկետում: Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Պայմանագրով նշված կարգով կամ ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

գ) Ապահովագրողին տրամադրել վնասների հատուցման համար Ապահովադիրին (Ապահովագրված անձին) ներկայացված հայցի կրկնօրինակը, տեղեկացնել Ապահովագրողին հասցված վնասների փաստի առթիվ համապատասխան մարմինների գործողությունների մասին՝ հետաքննություն, կանչ դատարան և այլն, ներկայացնել առկա նյութերը և փաստաթղթերը, մասնավորապես՝ օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռ կամ որոշում, որով հիմնավորվում է վնասի համար պատասխանատու անձի վնասի հատուցման պարտավորությունը և որոնք անհրաժեշտ են Պայմանագրով ապահովագրական հատուցում ստանալու համար,

9.2.4 պահպանել գնահատման գործունեությունը լիցենզավորող իրավասու մարմինների և մասնագիտացված միությունների կողմից սահմանված պայմանագրի անհրաժեշտ պահանջները և կանոնները և առաջնորդվել դրանցով,

9.2.5 անհպաղ տեղեկացնել Ապահովագրողին իր գործունեության բնույթի մեջ ցանկացած տեսակի փոփոխություններ մտցնելու մասին, եթե դրանք կարող են ազդել ապահովագրական ռիսկերի մեծացման վրա,

9.2.6 իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմանագրով և Կանոններով նախատեսված այլ գործողություններ:

9.3 Ապահովագրողն իրավունք ունի՝

9.3.1 ծանուցել Ապահովադիրին Պայմանագրի անվավերության մասին, եթե Պայմանագրի կնքելուց հետո պարզվել է, որ Ապահովադիրը դիտավորյալ հայտնել է ոչ հավաստի տեղեկություններ իրեն հայտնի հանգամանքների վերաբերյալ, որոնք էական ազդեցություն ունեն ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության և հնարավոր վնասների մեծության վրա: Էական են համարվում այն հանգամանքները, որոնք որոշված են Պայմանագրով կամ նշված են Ապահովադիրի կողմից Ապահովագրողին ներկայացված գրավոր հայտի մեջ,

9.3.2 իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք համարում է անհրաժեշտ վնասների նվազեցման համար, պաշտպանել Ապահովադիրի իրավունքները, կատարել վնասների կարգավորմանն ուղղված գործողություններ,

9.3.3 մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը չի կատարել Կանոններով, Ապահովագրության պայմանագրով և օրենսդրությամբ նախատեսված որևէ պարտավորություն,

9.3.4 ապահովադիրից պահանջել կատարել օրենքին և այլ իրավական ակտերին չհակասող այլ գործողություններ:

9.4 Ապահովագրողը պարտավոր է՝

9.4.1 ապահովադիրին (Ապահովագրված անձին) ծանոթացնել ապահովագրության պայմանների հետ և Պայմանագրի կնքման ժամանակ հանձնել դրանք Ապահովադիրին (Ապահովագրված անձին):

9.4.2 չիրապարակել Ապահովադիրի (Ապահովագրված անձի) կամ այլ անձանց առողջական վիճակի և նրանց գույքային դրության մասին տեղեկությունները՝ բացառությամբ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերի,

9.4.3 ուսումնասիրել Ապահովադիրի կողմից ներկայացված փաստաթղթերը և օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոններին համաձայն Ապահովադիրին (Ապահովագրված անձին, Շահառուին) տրամադրել ապահովագրական հատուցում վճարելու կամ մերժելու վերաբերյալ եզրակացություն,

9.4.4 ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ համապատասխան եզրակացության ընդունման դեպքում օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոններին համաձայն Շահառուին տալ ապահովագրական հատուցում,

9.4.5 պատշաճ կերպով կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները:

10. Ապահովագրական հատուցման վճարման և վնասի գնահատման կարգը

10.1. Պատասխանատու անձին վնասի հատուցում իրականացնելու պարտավորությունը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվելու դեպքում Ապահովագրողը օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով, և Պայմանագրով սահմանված կարգով իրականացնում է ապահովագրական հատուցում Շահառուին կամ նրա օրինական ժառանգորդին:

10.2. Ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի ենթաչափի շրջանակներում՝ օրենքին, այլ իրավական ակտերին, Պայմանագրի պայմաններին և Կանոններին համապատասխան:

10.2.1 Ապահովագրողի համար ապահովագրական հատուցման գործընթացի սկիզբ է համարվում Ապահովադիրի (Ապահովագրված անձի, Շահառուի) գրավոր հայտարարությունը, որով Ապահովագրողը տեղեկացվում է, որ գնահատման գործունեության հետ կապված վնասի հատուցման պահանջ է ներկայացվել Ապահովադիրի (Ապահովագրված անձի) նկատմամբ:

10.2.2 Ապահովագրական հատուցում իրականացնելու համար հիմք է հանդիսանում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով (որոշմամբ) հաստատված պատասխանատու անձի (ապահովագրված անձի) պատասխանատվության հանգամանքը՝ գնահատման արդյունքում պատճառված վնասի հատուցման մասով:

10.3. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է հատուցում ստանալու համար անհրաժեշտ՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառված վնասի չափերը հավաստող փաստաթղթերը ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Այդ ժամկետում Ապահովադիրի (Շահառուի) կողմից անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջոցառումներ սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը

Կանոնների համաձայն Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը ելնելով տվյալ գործի հանգամանքներից կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Այդ ժամկետում Ապահովադրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանուն են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

10.4. Պատահարի առաջացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

10.5. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

10.6. Ապահովագրողն իրավունք ունի անձանք հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ վնասի չափի որոշման համար նշանակել իր ներկայացուցիչ: Տարածայնությունների դեպքում Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել, որպեսզի վնասի չափը որոշվի անկախ փորձագետների կողմից: Այս դեպքում փորձագնմության ծախսերն իրականացվում են այդպիսի պահանջ ներկայացնող Կողմի հաշվին:

10.7. Ապահովագրական հատուցման չափը որոշվում է պատճառված վնասների մեծությամբ՝ որի համար կարող է հիմք ընդունվել դատարանի վճռով հիմնավորված և հաստատված վնասի չափը, բայց ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի ենթաչափերը:

10.8. Ապահովագրական հատուցման վերջնական գումարից մասհանվում է Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարը:

10.9. Եթե Պայմանագրով սահմանված է չհատուցվող գումար և մեկ ապահովագրական պատահարով հասցվել են մի քանի վնասներ, ապա չհատուցվող գումարը կիրառվում է մեկ անգամ:

10.10. Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումների հանրագումարները չեն կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարի չափը:

10.11. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարզվում է, որ Ապահովագրված անձի՝ գնահատողի պատասխանատվությունն ապահովագրված է մի քանի ապահովագրական ընկերություններում (կրկնակի ապահովագրություն), ապա Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում Ապահովագրված անձի ունեցած բոլոր Պայմանագրերի ապահովագրական գումարների հանրագումարում իր հետ կնքված Պայմանագրին համամասնորեն, սակայն ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված մեկ ապահովագրական պատահարի գծով ապահովագրական գումարի ենթաչափը:

10.12. Պատճառված վնասները (իրական վնաս և բաց թողնված շահույթ), որոնք ենթակա են ապահովագրական հատուցման կարող են ներառել նաև՝

- ա) գույքի գնի իջեցման (բարձրացման) հետևանքով թերագնահատման (գերագնահատման) պատճառած վնասը,
- բ) գույքի գնի իջեցման պատճառով վնաս կրած անձի չվճարած գույքային հարկի գումարը, որը որոշվում է հարկային մարմինների ստուգման արդյունքներով,
- գ) վնաս կրած անձի բաց թողած շահույթը, որը որոշվում է գույքի գերագնահատման հետևանքով վճարված հարկի մեծության չափով և որը վճարվել է հարկի վճարման պահից մինչև գերավճարված մասի փոխանցման պահը ընկած ժամանակահատվածում:

10.13. Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովադիրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովադրի (Շահառուի) հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովադրին (Շահառուին):

Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով:

10.14. Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 30 օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

10.15. Եթե Պայմանագրով նախատեսված է ապահովագրվճարի տարածամեկտ վճարում և ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրվճարը մուծելը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական հատուցումից մասհանել չվճարված ապահովագրվճարի մասը:

10.16. Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

- ա) պատասխանատու անձի վնասի հատուցման պարտավորությունը հաստատված չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով (որոշմամբ),
- բ) Ապահովադիրին, այն պահից, երբ իրեն հայտնի է դարձել ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը, չի հայտնել Ապահովագրողին Կանոններով և, Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում և եթե չի ապացուցվում, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է դրա մասին կամ Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել Ապահովագրողի ապահովագրական հատուցման վճարման պարտավորության կատարման վրա,
- գ) Ապահովագրված անձը կանխամտածված կերպով չի ձեռնարկել կորուստները փոքրացնելու համար անհրաժեշտ ողջամիտ և իր համար մատչելի միջոցներ:

10.17. Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման վճարումից, եթե այն տեղի է ունեցել Ապահովադրի դիտավորյալ կամ կանխամտածված գործողությունների հետևանքով:

10.18. Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում:

11. Չհատուցվող պատահարները

11.1 Կանոնների համաձայն չեն հատուցվում այն վնասները, որոնք արդյունք են՝

- ա) երկու տարբեր գնահատողների կողմից միևնույն անշարժ գույքի, միևնույն ժամանակահատվածում (որի ընթացքում տվյալ անշարժ գույքի շուկայում գների էական փոփոխություններ տեղի չեն ունեցել), գնահատման եզրակացության արդյունքում ձևավորված (հաշվարկված) արժեքների միջև թույլատրելի շեղման, որը Կանոնների համաձայն չի կարող գերազանցել գույքի առավելագույն արժեքի 20 %-ը,
- բ) Ապահովադրի և Շահառուի կանխամտածված (միտումնավոր կամ դիտավորյալ) գործողությունների, որոնք հանգեցրել են ապահովագրական պատահարի, ինչպես նաև այն գործողությունների, որոնք արդյունք են Ապահովագրված անձի և Շահառուի չարամիտ համաձայնության,
- գ) Գնահատման այն պայմանագրերով ստանձնած պարտավորությունների Կանոններով նախատեսված խախտման, որոնցում որպես գնահատողներ Ապահովագրված անձից բացի ներգրավված են նաև այլ գնահատողներ, որոնք նախատեսված չեն Ապահովագրության պայմանագրում,
- դ) Կանոններում նշված օբյեկտների գնահատման հետ կապված վնասի առաջացման, որը հետևանք է փորձագետի անաշառության դրսևորման,
- ե) Ապահովագրված անձի կողմից գնահատման պայմանագրով ամրագրված պարտավորություններից միակողմանի հրաժարման, եթե Ապահովագրված անձի կողմից գնահատման պայմանագրից միակողմանի հրաժարվելը պայմանավորված չէ Ապահովագրված անձի հետ գնահատման պայմանագիր կնքած հաճախորդի կողմից պայմանագրով ամրագրված պարտավորությունների (անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում, աշխատանքային անհրաժեշտ պայմանների ապահովում և այլն) խախտմամբ,
- զ) Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ ճառագայթման ներգործության,
- է) Ռազմական գործողությունների, այլ ռազմական միջոցառումների, քաղաքացիական պատերազմների, գործադուլների, ամեն տեսակ քաղաքացիական հուզումների, բռնագրավման, առգրավման, ռեկվիզիցիայի, կալանքի կամ գնահատման համար օգտագործված նյութերի՝ պետական մարմինների կարգադրությամբ ոչնչացման հետևանքով վնասի,
- թ) օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

12. Ապահովագրության պայմանագրի փոփոխությունները և լրացումները

12.1 Պայմանագրի փոփոխությունները կամ լրացումները ձևակերպվում են Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ և գրավոր տեսքով:

12.2 Պայմանագրի փոփոխման կամ լրացման դեպքում կողմերի պարտականությունները համարվում են փոփոխված Պայմանագրի փոփոխման կամ լրացման մասին համաձայնագրի կնքման պահից:

13. Վեճերի լուծման կարգը

13.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճերը լուծվում են դատական կարգով՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

13.2. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

14. Եզրափակիչ դրույթներ

14.1 Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրի կողմերից ոչ մեկն իրավունք չունի Կանոններով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ Կողմի, առանց Պայմանագրի մյուս Կողմի գրավոր համաձայնության, բացառությամբ Ապահովագրողի կողմից վերաապահովագրական գործառնություններից:

14.2. Պայմանագրի կողմերը պատասխանատվություն են կրում իրենց կողմից հայտնված տվյալների ճշտության համար և պարտավորվում են տեղեկացնել միմյանց այդ տվյալներում կատարված յուրաքանչյուր փոփոխության մասին:

14.3. Կանոններով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պայմանագրի կողմերը պատասխանատվություն են կրում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

14.4. Բոլոր հայցերը և դիմումները, որոնք Պայմանագրի կողմերն ուղղում են իրար, պետք է իրականացվեն գրավոր ձևով:

14.5. Կանոններով չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: